

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Մեռելահարցուկներուն մասին նաեւ աւելցնեմ, որ անոնք սովորաբար հանգուցեալներու հոգիները կը կոչեն՝ անոնց շիրիմներուն իսկ վրայ: Եսայիի 65.3-4 համարներուն մէջ կ'ըսուի. «Իմ ձեռքս երկնցուցի այնպիսի ժողովուրդի մը՝ որ միշտ կը բարկացնէ զիս. պարտէզներուն մէջ կը գոհեն եւ աղիւսներու վրայ խունկ կը ծխեն, գերեզմաններու վրայ կը նստին, եւ գիշերները առանձին տեղեր կ'ացնեն»:

Հոգի կանչողները ցած ձայնով, փսփսալով կը խօսին կարծես ձայնը գետնին տակէն կը լսուի: Ասոր համար ալ շատերը համոզուած են, որ այդ մարդիկը խարդախ եւ անարդար են, նաեւ սուտ կը խօսին՝ երբ կ'ըսեն թէ մեռելները իրենց հետ կը գրուցեն:

Ոգեհարցութիւնը կամ դիւթութիւնը կեղծիք չէ. անիկա լիովին իրազործելի է: Եթէ անկարելի բան ըլլար՝ Աստուած զայն չէր արգիլեր:

Շատեր կը կարծեն, որ այդ ամէնը խարէութիւն են: Հասկնալի է, որ երբեմն խարբեաներ ալ կը հանդիպին: Անոր ապացոյցն են բազմաթիւ կախարդներու դատաւարութիւնները: Օրինակ, երեւան եկաւ՝ որ շատերուն լաւ ծանօթ Աննա Ռոտէն կեղծարար մըն է: Բայց ասիկա բնաւ չի նշանակեր, թէ ամէն ինչ որ կը վերաբերի ոգեհարցութեան, այսինքն՝ ոգեհարցութեան, պարապ բան է: Այստեղ անմիջական կապ մը կայ ոգիներուն աշխարհին հետ:

Այդպէս է հիւրասիրութիւնը, որ ոչ միայն հիւրընկալին կ'ուրախացնէ, այլեւ հիւրին, եւ իր մէջ կը ստեղծէ նաեւ առաքինութեան բազում այլ մասեր՝ մարդասիրութիւն, եղբայրասիրութիւն, քաղաքավարութիւն, օտարներու հանդէպ մարդասիրութիւն, ողորմութիւն, խոնարհութիւն, քաղցր բարք եւ այլն:

Ան որ օտար երկրի մէջ օտարական ու պանդուխտ, չքաւոր կամ հիւանդ եղած է, քաջ գիտէ՝ թէ ինչ է հիւրասէր ու օտարասէր ըլլալը:

Հիւրասէր է ոչ թէ ան, որ սեղանի կը կանչէ պնակալէզներն ու բարեկամները՝ շնորհ ընելու համար կամ իր փառքին համար, այլ ան որ աղքատները, տնանկներն ու նփղեհները կը հաւաքէ իր տունը, կը կերակրէ ու կը մխիթարէ անոնց՝ առանց փոխադարձ ակնկալութեան: Զուարթուն դէմքն ու քաղցր խօսքերը աւելի կը յագեցնեն հիւրերը, քան բազմախորտիկ սեղանն ու անուշահամ ըմպելիները: Մոլի ու խելագար է այն հիւրընկալը, որ այն դիտաւորութեամբ կը հիւրընկալէ օտարականները՝ որ միայն պատիւ ու մեծարանք մատուցեն իրեն:...

Շարունակելի

ՉԱՍՅԷ.



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 22 ՅՈՒՆՈՒԱՐ, 2012

ԹԻՒ 4

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՒՄ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3.13-21

Բ. ԶԿՈՒ ԾՆՆԴԵԱՆ

Ո՛չ ոք երկինք ելաւ՝ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ,

նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատարուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է.- Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

ԱՌԱՅՈՒ ՔՐԻՍՏՈՒՄ ԾԱՂՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ո՛չ միայն դժուար է քրիստոնէական կեանք ապրիլը, այլեւ՝ անկարելի: Անկարելի կ'ըլլայ եթէ երբեք Քրիստոսի չենք միացած ինչպէս ճիւղ մը ծառին կը միանայ: Առանց Քրիստոսի մենք ոչինչ կրնանք ընել (ՅՀ. 15.5): Իսկ երբ Յիսուսի միացած ըլլանք, ամէն ինչ կրնանք տանիլ շնորհիւ իրեն, որովհետեւ ինքն է որ մեզ կը զօրացնէ իր կամքը կատարելու համար (Փլպ. 4.13): Առանց Քրիստոսի օգնութեան, մենք չենք կրնար քրիստոնէական կեանք ապրիլ: Առանց Քրիստոսի Հոգիին, մենք անկարող ենք ապրելու աստուածապաշտութեան կեանք, հոգեւոր կեանք: Ահա թէ ինչու Քրիստոս խոստացաւ Հօրը երթալէ ետք Սուրբ Հոգին դրկել մեզի (ՅՀ. 14.16):

## ԱԹԱՆԱՍ ՅԱՅՐԱՊԵՏ

Հռչականունն արտոյեան հաւատոյ Ս. Երրորդութեան՝ ընդդէմ Արիոսի, որ ուրացած էր Քրիստոսի աստուածութիւնը: Քրիստոնեայ բարեպաշտ ընտանիքիգաւակ, ծնաւ 295-ին Աղէքսանդրիոյ մէջ: Նոյն քաղաքին Աղէքսանդրոս հայրապետը, օր մը տեսնելով, որ անիկա դեռ մատաղ մանուկ, ծովեզերքը եպիսկոպոսի կերպ առած, մկրտութիւն եւ ձեռնադրութիւն կատարել կը ձեւացնէ, հոգեւոր կոչումի նշան նկատեց իր այդ ընթացքը եւ զայն ընդունեց հայրապետանոցի մէջ ուր զարգացաւ շնորհալի փոքրիկը: Յետոյ սարկաւազ ձեռնադրուեցաւ անկէ եւ կարճ ժամանակի մէջ փայլեցաւ իր տաղանդով, աստուածաբանական խոր հմտութեամբ ու գրչի եւ խօսքի ձիրքերովը առարկայ դառնալովամէնունուշադրութեան: Սարկաւազ էր տակաւին, երբ ընկերակցելով իր Եպիսկոպոսին, Նիկիոյ Ժողովին մէջ պաշտպանեց ուղղափառ հաւատքը: Աղէքսանդրի յաջորդելէ ետք, իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ, իշխանութեամբ եւ աւելի ոգեւորուած ջանքով պայքարեցաւ ազանդամիտ հոսանքներու, մասնաւորապէս Արիանոսներու եւ Կիսարիանոսներու դէմ. եւ այդ պատճառաւ քանիցս ենթարկուեցաւ բուռն հակառակութեան, երբեմն ստիպելով նոյնիսկ հեռանալ իր Աթոռէն: Մեռաւ 373-ին: Իր հօր վարդապետութիւնը եւ անհամեմատ կորովը արժանի դարձուցին զինքը նկատուելու Եկեղեցւոյ ամենամեծ վարդապետներէն մին: Իրաւամբ է որ Ս. Գրիգոր Նազիանզացի կոչած է զայն

«Սիւն Եկեղեցւոյ»: Իր գրական երկերը, ամէնքն ալ աստուածաբանական եւ ջատագովական, որոնցմէ կարեւոր մաս մը Ե. դարուն եւ յետոյ թարգմանուած են հայերէնի, եկեղեցական մատենագրութեան ամենէն թանկագին հարստութիւններէն կը համարուին իրաւամբ:

## ԿԻՐԵՂ ՅԱՅՐԱՊԵՏ

Եզրիպտացի ազնուական եւ բարեպաշտ ընտանիքէ, ազգական Թէոփիլոս պատրիարքին, որմէ ձեռնադրուեցաւ եւ 412-ին անոր յաջորդեց իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ: Վարդապետ Եկեղեցւոյ եւ կորովի պաշտպան ուղղափառ հաւատքին. ինքն էր որ նախագահեց Եփեսոսի տիեզերական ժողովին, ջախջախեց Նեստորի հերետիկոսութիւնը եւ «միաւորեալ մի բունութիւն» բանաձեւովը, որ հիմն է Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան, իր վերջին ճշդումին յանգեցուց քրիստոսաբանութիւնը: Այնքան եռանդուն հոգով ջանաց ջնջել հեթանոսութեան հետքերը Աղէքսանդրիոյ մէջ, որ յանիրաւի գրպարտուեցաւ իբրեւ պատճառ սպաննութեան Հիւպատիա իմաստասէր տիկնոջ: Հեղինակ է մեկնաբանական եւ աստուածաբանական բազմաթիւ գիրքերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են մասամբ Ե. եւ մասամբ Լ. դարերուն Սիւնեաց Դպրոցի պատկանող մատենագիրներու միջոցաւ: Կիրեղ հայրապետ մեռաւ 444 թուականին:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս տարի Աթանաս եւ Կիրեղ հայրապետներու տօնը կը գուգադիպի Շաբաթ՝ 21 Յունուարին:

Կը շնորհաւորենք Աթանաս եւ Կիրեղ անուն ունեցող մեր բոլոր ժողովուրդի զաւակներուն:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՈՒՐԴՆԵՐԸ

#### ՊՍԱԿԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ հաւաք խորհուրդ է ասումսուրբիւնը:

Ամուսնութիւնը հիմնուած է ողջախոհութեան վրայ, վասնզի որդեծնութիւն է ասոր նպատակը: Այր եւ կին, իբրեւ ճշմարիտ անդամներ իրենց եկեղեցւոյ, պէտք է ըլլան մաքրակենցաղ, որպէսզի իրենց միութիւնը բեղմնաւորուի, ընտանիքը աճի եւ Եկեղեցին զօրանայ նոր ոյժերով:

Եւ որովհետեւ ողջախոհութեան վերայ հիմնուած է ամուսնութիւնը, պէտք է որ այր եւ կին զգուշանան բողջախոհութենէ եւ չապականեն իրենց ամուսնական միութեան սրբութիւնը՝ պոռնկութեամբ եւ շնութեամբ:

Պօղոս Առաքեալ Եփեսացւոց թուղթին մէջ (Ե. 21-33) այր եւ կնոջ ամուսնական կեանքի պարտաւորութիւնները եւ անոնց իրարու հանդէպ բռնելիք դիրքը բացատրելու ատեն կ'ըսէ.

«Աստուծոյ երկիւղով հնազանդեցէ՛ք իրարու:

Կիներ հնազանդ թող ըլլան իրենց այրերուն, իբրեւ Տիրոջ՝ որովհետեւ այրը գլուխն է կնոջ, ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցւոյ եւ փրկիչը մարմնին:

Ուստի ինչպէս որ եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Այրեր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս, ինչպէս որ Քրիստոս սիրեց իր Եկեղեցին, եւ իր անձը տուաւ անոր համար... Ան որ կը սիրէ իր կինը, իր անձը սիրած կ'ըլլայ:

Ասոր համար է որ մարդ պիտի...  
Շարունակելի

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ՃՇՄԱՐԻՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Մեծ մրցանակ մը խոստացուած էր այն նկարիչին, որ իր նկարով լաւագոյն կերպով պիտի ներկայացնէր խաղաղութիւնը: Բոլոր մրցողներուն մէջէն միայն երկու անձերու նկարները ընտրուեցան: Մէկը կը պարզէր դաշտային պատկեր մը ամրան ընթացքին: Առուակը անդմուկ կը հոսէր կանաչ մարգագետիններուն մէջէն, արծաթի լայն ժապաւէնի մը նման: Ժայռերը կեցած էին տարածուն ու հանդարտ: Հօտը կ'արածէր հսկայ կաղնիի մը գով շուքին տակ: Հրաշագեղ թեւերով թիթեռնիկները կը հանգչէին գոյնզգոյն վարդերու եւ ծաղիկներու վրայ, թռչունները թառած էին ծառերուն ճիւղերուն ու կ'երգէին: Կապոյտ երկնակամարը կը հովանաւորէր ամէն ինչ: Այս էր անհամեմատ նկարած «խաղաղութիւնը»:

Սակայն մրցանակը տրուեցաւ այն նկարիչին, որ իր պաստառին վրայ կը պարզէր սաստիկ ալեկոծ ովկիանոս մը, որուն ալիքները կատաղօրէն կը գարնուէին եզերքի ժայռերուն ու կը փշրուէին: Մուրթ էր երկինքը ու ամպամած: Կայծակը կ'այրէր ամպերուն սիրտը: Սակայն մօտակայ բարձր ժայռի մը կողքին, խոռոչի մը մէջ բոյն մը կար, ուր թռչուն մը կը հանգչէր իր ձագերուն վրայ: Փրփրադէզ, կատաղի ալիքները գայրոյթով կը բախէին ժայռին, սակայն թռչունը որեւէ վախի նշան ցոյց չէր տար եւ կատարեալ խաղաղութեան մէջ հանդարտութեամբ կը դիտէր այս բոլորը, որովհետեւ գիտէր՝ թէ այն ապառաժը որուն վրայ կը հանգչէր ամուր էր ու ապահով:

Քրիստոս է հաւատացեալին միակ ապաստանարանը, ուր հանգչելով ան կրնայ դիտել կեանքի բոլոր վտանգները՝ լման խաղաղութեան մէջ եւ առանց վախի:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ**

**58.13- -59.7**

*Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ գայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգուեմք քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:*

*Միթէ կը կարծէք թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ականջը, որպէսզի ձեզ չլսէ: Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ իրամաս բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ, այնպէս՝ ինչպէս ձեր անօրէնութիւններուն պատճառով Աստուած երես դարձուց եւ չողորմեցաւ ձեզի: Որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով պղծուած են եւ ձեր մատները՝ մեղքերով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան:*

*Չկայ մէկը, որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը որ իրաւունքով դատ տեսնէ. դուք ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր յարած դաւերը բարբերու հակիրթներ են, որոնցմէ ուտել ու գողը մահ կը գտնէ, որովհետեւ իժ է անոնց մէջիւնը: Ձեր հիւսած դաւերը սարդի ոստայն են, որոնցմէ հագուստ չ'ելլեր եւ բանի չեն ծառայեր: Դուք բնաւ չէք կրնար արդարանալ ձեր գործերով, որովհետեւ ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:*

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԱՌԱՋԻՆ ԵՎ ՄԱՄԱԿԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ**

**4.12- -5.10**

*Հաւատացեալներուն օրինակ եղի՛ր խօսեմովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալստի հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ, որ մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երեցները ձեռք դրին քու վրայ: Այս ըսածներու մասին խորհէ՛ եւ գանձե՛ գործի վերածելու աշխատէ՛, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղի՛ր թէ դուն քեզի եւ թէ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այդպէս մնա՛, գիտնալով որ այդ ձեռով ոչ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:*

*Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ձեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ գայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառանները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները՝ քոջդ տեղը դի՛ր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցի՛ր անոնց: Պատուէ՛ եւ խնամէ՛ այն այրիները որոնք իսկապէս որբեայրի են: Իսկ երբ այրի մը գաւակներ ու թոռներ ունի, պէտք է անոնք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկելի՛ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար այդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին ան է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցնէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտոող այրին՝ կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր որպէսզի անբարատ ըլլան: Իսկ մէկը որ իր ծանօթներուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր՝ իր հաւատքը ուրացած անձ մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:*